

Դաւրիժեցի կը շարունակէ պատմել, թէ Շահը «անփոփոխելի դոյր հաստատեալ ի միտս» իր այս նպատակը: Սակայն, Վրաց պատերազմները արգելք եղան իր այդ մտադրութեան յառաջ տարման:

Արդարեւ, 1616-էն առաջ Պարսից Վրաստան արշաւանքը, 1616-ին Հալէպէն եկած թրքական բանակին երեւանի անյաջող պաշարումը, Շահին փետրուարէն սկսեալ 1617 տարւոյն Վրաստան գտնուիլը՝ բոլորը միացան էջմիածնայ տեղափոխութեան ծրագրին ջուրը իյնալուն համար:

Թէ՛ Պօջայ Սաֆար եւ թէ՛ Պօջայ Նազար 1616-ին Սպահան կը գտնուէին: Այդ տարուայ մարտ 26-ին Փրա Յովհաննէս Դատտէուսի կողմէ Սպահանէն զրուած նամակ մը Փրա Պէնինուսին, որ Հոռով կը գտնուէր, կը վկայէ, թէ Կարմեղիան այդիներու եւ վանական ուրիշ հաստատութեանց շինութեան համար ինք վարձած էր բազմաթիւ գործաւորներ եւ կ'աւելցնէ. «Ես չուզեցի հայ (գործաւորներ) ալ գործածել, մինչեւ որ Պօջայ Նազար եւ Պօջայ Սաֆար աղաչեցին զանոնք ալ վարձել շինութեան համար:»24)

Բրիտանական Թանգարանի թիւ 8 ձեռագիր աւետարանը, որ գրուած է 1280-ին, պատկանած է նաեւ Պօջայ Նազարին: Վերջինիս ընտանիքի մասին կան շահեկան եւ հաստատող վկայութիւններ: Ահա այդ յիշատակարանները.—

«Դարձեալ յիշեցէք ի Ք(րիստո)ս զվերջին ստացող ս(ուր)բ աւետարանս եւ գործք առաքելոցն ընդ նմա. զՋուղեցի պարոնաց պարոն Պօջայ Նազարն որ ստացաւ զսա հալալ եւ յարդար վաստակոց իւրոց եւ ետ վերստին նորոգել ծաղկել եւ զարդարել ոսկով. եւ լազուարդով եւ ազգի ազգի երամբք դեղերով. ի պայծառութիւ(ւն) ս(ուր)բ եկեղեցայց. եւ ի վայելումն մանկանց սիոնի. յիշատակ բարի հոգոյ իւրոյ եւ ծնողաց իւրոց. հօրն Պօջայ, Պաչկին. եւ մօրն Մարիամին եւ եղբարցն պարոնաց պարոն Պօջայ Սափարին. եւ Սինանին եւ ամ(ենայն) արեան...»:

«Կրկին անգամ յիշեցէք ի Ք(րիստո)ս զՊօջայ Նազարն եւ զկողակիցն իւր. Պաթուն Ջանն. եւ զորդիքն. իւրեանց Պարոն Ջաֆրազն, Ջէլիազն, եւ զստերք իւրեանց...»

«Դարձեալ կրկին անգամ յիշեցէք ի Ք(րիստո)ս զպարոնաց պարոն. զՊօջայ Սափարն. եւ զկողակիցն իւր Սաւլթայ Փաչէն, եւ զորդիքն իւրց. նախ զպարոն Մելիք աղէն. Փոսանդուն. Սօլթանումն, եւ զՋալալն. եւ զգոտերքն իւր(ան)ց. եւ զամ(ենայն) արեան...»:

«Արդ՝ ես Մեսրոպ զպէր Սիղանցի վերստին նորոգեցի, եւ ծաղկեցի ոսկով. եւ լազուարդով. եւ ազգի ազգի երանք դեղերով բազում աշխատեցայ. եւ աւարտեցի, ի յերկիրն Պարսից. ի քաղաքն որ է Սպահան. ի թաղաւորութե(ան) Շահ Ապասին որ բազում քաջութեամբ յաղթէ թշնամեաց իւրոց: Եւ ի մերում հայրապետութե(ան) տ(է)ր Դաւթի եւ տ(է)ր Մելքէսէթ կաթողիկոսի, ամ(ենայն) հայոց, ի թուականութե(ան). մերում Ռեկէ 1618) աւարտեցաւ եւ կազմեցաւ:»:

«Եւ արդ... յիշեցէք զիս զանարժան Մեսրոպ... եւ զուսուցանող վարպետաց վարպետն իմ նախ տ(է)ր Սարգիս որ մականունն Մազման կոչի. եւ զտ(է)ր Մարտիրոս Սիղանցին...»:

Յիշատակարանէս է, որ առաջին անգամ կը սորվինք Պօջայ Նազարին կնոջ անունն Պաթունջան ըլլալը, Պօջայ Նազարի գոտերաց տէր ըլլալը, թէ եւ անոնց անունները մեզի կը նման անձանօթ:

1618-ին, երբ այս յիշատակարանը կը գրուէր, Պօջայ Նազարի որդիք՝ Պօջայ Սաֆրազ եւ Էլիազ արդէն ծնած էին, մինչ Վաթանի չյիշուիլը մեզի կրնայ ենթադրել տալ, որ Պօջայ Նազարի այդ կրտսերազոյն որդին դեռ չէր ծնած:

Պօջայ Սաֆարի կենսագրութիւնը տալու ժամանակ, տեսանք որ Շահ Ապաս Մեծ ներկայ եւ մասնակից կ'ըլլայ 1620 յունուար 16-ին Հայոց Եպիփանի կամ ջուրօրհնէքի մեծաթափօր արարողութեան: Այդ արարողութեան վերջաւորութեան դեռ, երբ Շահն ու թափօրը գետեղբքին վրայ կը գտնուէին (Ջէյնտրհուտ, Սպահան), հետաքրքիր Շա-

24) Chronicle Carmelites, Vol. I., էջ՝ 232: